



Հաստատված է
 ԳՊՀ գիտական խորհրդի
 2019թ. թիվ 5 նիստում
 ԳՊՀ ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան
 «22» հունիսի 2019թ.

ԿԱՐԳ

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
 ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԲՆԱԳՐԵՐԻ
 ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
 (փոփոխություններով)**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կարգը սահմանում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գիտական հոդվածների ժողովածուի (այսուհետ՝ Ժողովածու) բնագրերին ներկայացվող ձևավորման պահանջները, չափանիշները, դրանց հրապարակման պայմանները:
- 1.2. Հրապարակման նպատակով ընդունվում են սույն կարգի դրույթներով նախատեսված չափանիշներին և պահանջներին համապատասխանող բնագրերը:
- 1.3. Սույն կարգով նախատեսված բնագրերի ձևավորման պահանջները չապահովելու դեպքում բնագիրը վերադարձվում է հեղինակին:
- 1.4. Հեղինակը կարող է հրապարակվող նյութը կրկին ներկայացնել՝ այն սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխանեցնելուց հետո:

**II. ԲՆԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ
 ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ**

- 2.1. Բնագրերը ներկայացվում են ժողովածուի խմբագրության տպագիր (թղթային) և էլեկտրոնային տարբերակներով (տեքստային խմբագրիչ «MS WORD, CD/DVD-ով» կամ էլեկտրոնային փոստով՝ info@gsa.am, infogsu@mail.ru) : Տպագիր և էլեկտրոնային տարբերակների բովանդակությունները պետք է նույնական լինեն:
- 2.2. Նյութի հրապարակման և հեղինակին (համահեղինակներին) ժողովածուի մեկ օրինակի առաքման համար Համալսարանի դասախոսներից գումար չի գանձվում, իսկ ա) ոչ աշխատակից հանդիսացող հեղինակների (համահեղինակների) համար գանձվող գումարը կազմում է 1 էջը՝ 1800 ՀՀ դրամ չափով, բ) ոչ լրիվ էջի համար գանձվում է լրիվ էջին համապատասխանող գումար,

գ) Ժողովածուի լրացուցիչ օրինակի համար (ընդգրկում է նաև առաքումը) բոլոր հեղինակները (համահեղինակները) պետք է վճարեն 2.2. կետի ա) ենթակետում նշված չափով:

2.3. Նյութը հրատարակման ընդունելուց հետո հեղինակը (համահեղինակները) տեղեկացվում է (են) այդ մասին, ինչպես նաև դրա հրատարակման և առաքման համար հաշվարկված վճարի չափի մասին:

2.4. Այդ մասին տեղեկացվելուց հետո հեղինակը (համահեղինակները) յոթ աշխատանքային օրվա ընթացքում Համալսարանի հաշվին /ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ Կամո մ/ճ 16021100146800/ կատարում են համապատասխան վճարում:

2.5. Հեղինակը վճարումը կատարելու պահից 10-օրյա ժամկետում վճարումը հավաստող անդորրագիրը հանձնում է Համալսարանի հաշվապահություն կամ ուղարկում էլեկտրոնային փոստով:

2.6. Ժողովածուի խմբագրական խորհուրդն առանձին դեպքերում հեղինակին (հեղինակներին) կարող է ազատել սույն կարգով սահմանված վճարից:

2.7. Լրամշակման նպատակով հեղինակներին վերադարձված և հետ ստացված նյութերը կրկին մուտքագրվում են:

III. ԲՆԱԳՐԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ժողովածուում հրատարակման համար բնագրերը պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին ու պահանջներին՝

3.1. Բովանդակ են գիտական նորույթ, ունենան տեսական և գործնական նշանակություն:

3.2. Հոդվածի ծավալը՝ 10 էջից ոչ ավելի և ըստ գիտության հետևյալ բնագավառների.

ա) Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ

բ) Քիմիական գիտություններ

գ) Կենսաբանական գիտություններ

դ) Տեխնիկական գիտություններ

ե) Էկոլոգիական գիտություններ

զ) Գյուղատնտեսական գիտություններ

է) Պատմական գիտություններ

ը) Տնտեսական գիտություններ

թ) Փիլիսոփայական գիտություններ

ժ) Բանասիրական գիտություններ

ժա) Իրավաբանական գիտություններ

ժբ) Մանկավարժական գիտություններ

ժգ) Հոգեբանական գիտություններ

ժդ) Սոցիոլոգիական և քաղաքական գիտություններ

ժե) Աշխարհագրություն, երկրաբանություն և երկրաբնապահպանություն:

3.3. Վերնագիրն անհրաժեշտ է տպագրել երեք լեզվով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) մեծատառերով (կողմնորոշումը՝ կենտրոն), տառատեսակը՝ մզեցված:

3.4. Ներքևում՝ հեղինակի անունը, ազգանունը, պաշտոնը, կազմակերպության անվանումը, գիտական աստիճանը և կոչումը (առկայության դեպքում):

3.5. Հոդվածների ներկայացվող տեխնիկական պահանջներն են.

ա) Գիտական հոդվածի լեզուն կարող է լինել հայերեն, ռուսերեն, անգլերեն կամ այլ լեզուներով, երկու օրինակից, համակարգչային շարվածքով B 5 (17սմ x 24սմ) չափի տպագրական թղթի վրա, «GHEA Grapalat» տառատեսակով, 1,12 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 18 մմ լուսանցքով, էջադրումը՝ էջի ներքևում (footer), կողմնորոշումը՝ կենտրոն, սահմաները 1սմ: Վերևում նշել վերնագիրը՝ 10,5 տառաչափով (մեծատառերով, թավ): Վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում, նշել հեղինակ(ներ)ի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը (թավ տառերով), գիտական աստիճանը և կոչումը (սկսել մեծատառով, նոր տողից), զբաղեցրած պաշտոնը (սկսել մեծատառով նոր տողից), բաց թողնելով երկու տող՝ շարադրել աշխատանքը՝ վերջում նշելով նաև բանալի բառերը, օգտագործված գրականության ցանկը, գրականության հղումները: Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերը հավաքել «Microsoft Equation Editor 3.0» ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները (ներկայացնել նկարի տեսքով)՝ 10 տառաչափով, ինչպես նաև հոդվածի շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ հոդվածի վերնագիրը, ամփոփագիրը, հեղինակ(ներ)ի անունը, ազգանունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը:

բ) Հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (հեղինակները) (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը:

գ) Բնագրին հաջորդում է օգտագործված գրականության ցանկը: Հոդվածի վերջում, «Գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը՝ 10 տառաչափով, բնագրի լեզվով: Հաջորդաբար նշվում են կարգային համարը (առանց քառակուսի փակագծերի), հեղինակների ազգանուններն ու անվանատառերը՝ թավ և շեղ տառերով, հրատարակության վերնագիրը, հրատարակչության անունը, վայրը (քաղաքը), թվականը, նաև էջ(եր)ը, եթե հղված աղբյուրը միայն մեկ անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Պարբերական հրատարակությունների համար հեղինակի անվան և ազգանվան ու աշխատանքի վերնագրին հաջորդում են պարբերականի անվանումն առանց չակերտների, հրատարակման թվականը, հատորի և/կամ թողարկման համարները, վայրը, հերթական համարը և էջ(եր)ը: Էլեկտրոնային աղբյուրների դեպքում նշվում են հեղինակների ազգանուններն ու անվանատառերը, աշխատանքի վերնագիրը, կայքի հասցեն ամբողջությամբ (հղումը), հրապարակման (եթե հայտնի է) և վերջին այցելության ամսաթիվը, ամիսը, տարին:

դ) Հեղինակային «Ամփոփագիրը» և «Հիմնաբառերը» ներկայացվում են գրակա-
նության ցանկից հետո՝ երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն)՝ 500 նիշից ոչ
ավելի (ներառյալ բացակները):

ե) Ամփոփագրերին հաջորդում են տեղեկությունները հեղինակի մասին: Այն
պահանջվում է ներկայացնել նաև աղյուսակի տեսքով՝ երեք լեզվով՝ համաձայն
հավելվածի:

զ) Ներկայացված հոդվածների ենթատողային մեկնաբանությունները կամ հղումները
(footnotes) բերվում են տվյալ էջի ստորին հատվածում՝ յուրաքանչյուր էջում սկսելով 1
թվային համարակալումով (Restart each page), 10 տառաչափով:

3.6. Եթե խմբագրությունը չի կարողանում կապ հաստատել բնագրի հեղինակների հետ
նրանց նշած հասցեներով և հեռախոսահամարներով, ապա Ժողովածուի
խմբագրությունն իրավունք ունի հետաձգելու հրապարակումը:

IV. ԲՆԱԳՐԵՐԻ ԳՐԱԽՈՍՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4.1. Բնագրի ներկայացումից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում
կատարվում է նյութի նախնական փորձաքննություն՝ Ժողովածուի ընդհանուր
մասնագիտական ուղղվածությանն ու սահմանված պահանջներին դրանց
համապատասխանության տեսանկյունից:

4.2. Եթե նյութը չի համապատասխանում Ժողովածուի մասնագիտական
ուղղվածությանն ու պահանջներին, ապա խմբագրական խորհրդի որոշմամբ նյութը
ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում իրազեկում են հեղինակին
(հեղինակներին) մերժման մասին:

4.3. Ընդունված նյութերը գրանցման օրվանից 10-օրյա ժամկետում գրախոսման են
ուղարկվում խմբագրական խորհրդի անդամներին կամ, մասնագիտական
ամբիոններին, կամ, անհրաժեշտության դեպքում, խմբագրական խորհրդի որոշմամբ՝
տվյալ ոլորտում հանրապետության մեկ այլ առաջատար մասնագետի:

4.4. Գրախոսման օբյեկտիվությունն ապահովելու նպատակով հոդվածները գրախոսին
են ուղարկվում՝ առանց հեղինակի անվան նշումի, իսկ հեղինակին հայտնի չի
դառնում գրախոսի ով լինելը:

4.5. Նյութը գրախոսելուց հետո գրախոսը պետք է գրավոր և ստորագրությամբ
վավերացված ձևով գրախոսականն ուղարկի խմբագրություն՝ գրախոսվող նյութն
ստանալուց 20 օրվա ընթացքում:

4.6. Հեղինակները տեղեկացվում են գրախոսման արդյունքների մասին՝ դրանք
խմբագրություն ներկայացնելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում:

4.7. Գրախոսականները նյութերի հրապարակման օրվանից հետո երեք տարի
պահվում են խմբագրության արխիվում, իսկ պահանջի դեպքում՝ ներկայացվում ԲՈԿ:

4.8. Եթե գրախոսականներում կան դիտողություններ, ապա նյութը ուղարկվում է
հեղինակին՝ լրամշակման:

- 4.9. Հեղինակը նյութը պետք է լրամշակի այն ստանալուց 10 օրվա ընթացքում, որից հետո լրամշակված բնագրին պետք է կցի նամակ, որտեղ կլինեն պատասխաններ բոլոր դիտողություններին և պարզաբանումներ՝ կատարված բոլոր փոփոխությունների վերաբերյալ:
- 4.10. Եթե նյութը ենթարկվել է էական լրամշակման, ապա այն ուղարկվում է նոր գրախոսության՝ նույն գրախոսին և առաջին գրախոսման համար սահմանված պահանջների ու ժամկետների պահպանմամբ:
- 4.11. Խմբագրությունն իրեն իրավունք է վերապահում մերժելու նյութերի հրապարակումը, եթե հեղինակը չի ցանկանում կամ չի կարողանում վերացնել գրախոսականի մեջ նշված թերությունները կամ խախտվել են գիտական հրապարակումների էթիկայի կանոնները:
11. Բնագրի վերաբերյալ երկու տարբեր գրախոսներից կամ լրամշակված տարբերակի վերաբերյալ մեկ գրախոսից բացասական գրախոսության ստացման դեպքում հոդվածը զլխավոր խմբագրի որոշմամբ մերժվում է և ընդունված որոշման մասին տեղեկացվում հեղինակին: Նյութերի գրախոսման առավելագույն ժամկետը բնագրի ստացումից մինչև հրապարակման որոշման ընդունում երեք ամիս է:

Վ. ՆՅՈՒԹԵՐԻ ԳՐԱԽՈՍՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Ժողովածուի մեջ հրապարակվելիք նյութերի գրախոսումը պետք է կատարվի ներքոհիշյալ չափանիշներով
- 5.1. Նյութի բովանդակության արդիականություն և գիտականություն,
- 5.2. Հետազոտությունների արդյունքների (գիտական, գործնական) կարևորություն,
- 5.3. Բերվող տեղեկությունների լրիվություն ու արժանահավատություն,
- 5.4. Օգտագործված սահմանումների և ձևակերպումների ճշգրտություն,
- 5.5. Նյութի շարադրման ոճ,
- 5.6. Նյութի վերաբերյալ հիմնավորված եզրակացություններ, դիտողություններ:
- 5.7. Գրախոսության եզրափակիչ մասում նյութի վերլուծության արդյունքներով պետք է տրվի երաշխավորություն՝ նյութը ներկայացված տեսքով հրապարակելու, կամ եզրակացություն՝ այն լրամշակելու կամ վերամշակելու անհրաժեշտության վերաբերյալ (կառուցողական դիտողություններով) կամ էլ հրապարակման աննպատակահարմարության (մերժման) մասին:
- 5.8. Գրախոսականի վերջում նշվում է ամիս, ամսաթիվ, տարեթիվ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը (առանց կրճատումների)	
Աշխատանքի վայրը (առանց կրճատումների)	
Պաշտոնը, գիտական աստիճանը, գիտական կոչումը	
Հոդվածի վերնագիրը	
Աշխատանքային հասցեն	
Էլեկտրոնային փոստի հասցեն	
Հեռախոսի համարը (աշխատանքային, բջջային)	

СВЕДЕНИЯ ОБ АВТОРЕ

Фамилия, имя, отчество автора (без сокращений)	
Место работы (без сокращений)	
Должность, ученая степень, ученое звание	
Название статьи	
Адрес рабочий	
E-mail	
Телефон (рабочий, мобильный)	

INFORMATION ABOUT THE AUTHOR

Given name and Surname of the Author	
Institution	
Position, Academic Title	
Title of Article	
Institution address	
E-mail	
Phone Number (Office, Mobile)	